## ՁՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱՏԵՂ

*Գյուղական գերեզմանոցում առկա են XIX-XX դդ. բազմաթիվ տապանաքարեր, հիմնականում՝ արծանագրված, որոնցից երկուսը, չնայած XIX դարի են, նպատակահարմար գտանք զետեղել պրակում:*

***189*. ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** օրորոցաձև, հարավային նիստին, 6 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ ՇԸՆՀՈՐԱԼԻ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏԻ / ՀՈՒՐԸՆԿԱԼ
ՆԱԽՇՔԱՐ ԹԷԼՈՒԻ ԳԱՍՊԱՐՆ, ՍԱ Է ՁԿԻՆՆ ԱՓԱՐԻ /
ԱՄԻՐԵԱՆՑ, ՍԱ ԲԱՐԻ / ՎԱՐՈՒՔ ԷԱՆՑ ՁԱՇԽԼԱՐՀՅՍ,
40 ԱՄ ՓՈԽԵՑԱԻ Ի / ՔՍ 1892 ԱՄԻ, Ի 20-Ն ՄԱՅԻՍԻ,
ՈՎ ԸՆԹԵՌՆԼՈՅՔՅ / ԱՍԱՍՑԷ ԱՅՍՄ ՏԱՊԱՆԻՍ ԱԾ ՈՂՈՐՄԻ:

*Ծանոթ. Նախշքարը պետք է ընկալել «թելի, գործվածքի ներկարար» իմաստով:*

***190*. ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** օրորոցաձև, հարավային նիստին, 4 տող.




ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ ՅՕՀԱՆԷՍԻ /
ԱԲԿԱՐԵԱՆՑ, ՈՐ ԷՐ ԴԸՊԻՐ/ ԵՍ
ՀԱՆԳԵԱԻ 1896 ԱՄԻ, 11 / ՆՈՒԻՄԲՐԻ: